


ՊԱՏՄԱՆՔ

Տարեկան գին Կ. Պոլսոյ հմր. 40 Մհն.
Պաշտպան. Կ. Պոլսոյ 2 լիւրս
Վեցամս. Կ. Պոլսոյ 5 Մհն.
Պաշտպան. Կ. Պոլսոյ 1 լիւրս
Օտար երկիրներու 50 Ֆր.
Մանուցման տողը մէկ անգամի հա-
մար 3 զուրուշ, երկու անգամի հա-
մար 2 զուշ Կ. տեղի անդամներու
համար զատ սակարկութիւն կը-
լայ :
Խրաքանչիւր թիւ 40 վարաւ արծ :



ԼԵՐԱԳԻՐ

ՀԱՆՈՒՍԱԳԱՋՕՐԵՍՈՒՄ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 19 ՄԱՅԻՍ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ռուսիոյ Ռչնախանաց ձգած հըր-
դեհներն և կառավարութեան սաս-
տիկ խտուրթիւններն ի բաց առեալ
Եւրոպա հանդարտութեան մէջ է :
Վերջինը Հիւսիս Գաղղիոյ դադլթակա-
նութեանց մէջ գերութեան բարձ-
ման տարեդարձին օրը ճառ մը խո-
սեցաւ, որոյ մէջ բանաստեղծաբար
սկիզբը թիւն մ'ըրաւ նաև Հիւսի-
սոյ վիճակին վրայ : « Հիւսիսի կողմն,
ըսաւ, շարժում մը կը տեսնուի. բա-
նաստեղծ զի « Եւրոպայէն հսկա-
յական ճիգ կը թափէ և միապետա-
կան դերադրել երեւոյթներ յառաջ
կուգան. Գերմանական կայսրութիւ-
նը՝ դարուս ոգին ենթադրած բանին
դէմ իւր զօրութիւնները կը հաւա-
քէ : Մասկովի կայսրութիւնն առա-
ւել յաղիչ տեսարան մը կ'ընծայէ,
անկողար իշխանութեան կը դիմադրէ
այնպիսի բան մը, որ նոյնպէս սահ-
ման չունի. ամենակարող բռնապե-
տութեան, որ միլիոններով մարդիկ
կը յանձնէ « ամեն բան կուգամ, ամեն
բան կառնում, ամեն բան ունիմ »,
դուրս անհատի մը, անդուռն այս
սոսկալի պատասխանը կուտայ. « Ոչինչ :
Եւ այսօր այս Ռչնչին այդ ամեն բա-
նի դէմ ըրած ահագին պայքարին
հանդիսատես կը լինիմք : » Արդարեւ,
բանաստեղծին երեւակայութիւնը կը
նայ զինք չափազանց յառաջ տանիլ,
սակայն Ռուսիոյ ներքին վիճակը դժ-
բաղդարար այս պատկերին շատ ան-
համաձայն է : մէկ կողմէն մարդաս-
պանի ատրճանակն և հրճիգի կրա-
կը, միւս կողմէ բռնապետութեան
խտուրթիւններն երկու ծայրայեղ չա-
փազանցութիւններ են, որոց օրինա-
կըն աղատ երկիրներու մէջ չտեսնը-
ւիր : Ռուսիոյ սոսկականութիւնն ա-
մենանշուրթ միջոցներու կը դիմէ,
առանց Ռչնչին կարենալ յաղթելու :
Վերջին պատերազմին մէջ ամենէն
աւելի համբաւ ստացող զօրավար-
ներ, Կուրբա, Մէլիքով, Թոմիսկին,
ընդարձակ իշխանութեամբ զրեթէ
բովանդակ Ռուսիոյ վրայ կը տիրեն :
Սակայն դեռ ոչ ոք կրնայ ըսել թէ
Ռչնչին յաղթեցին : Չինուորները քի-
նով քաղաքը պաշարեցին և անցադիր
չունեցող բնակչաց ամենը ձերբակա-
լեցին : սոսկականութիւնն այս միջոցն
ընտրած է յեղափոխական գաղտնի
ընկերութեանց անդամները ձեռք
անցունելու համար : այսու ամենայ-
նիւ հրդեհները կը շատնան և ամ-
բողջ քաղաքներ հրդ ճարակ կը լի-
նին :

Տխուր տպաւորութեամբ կ'զգա-
ծի մարդ երբ լրացիր մը ձեռք առ-

նըրով կը բանայ, և անոր էջերն աչ-
քէ անցունելով կը տեսնէ որ այս ինչ
քաղաքը հրդեհ պատահեր է, հա-
ղարաւոր մարդիկ իրենց գոյքը կո-
րուսեր են, կամ գոնէ անոնց մնա-
ցորդը պահելու համար դաշտերը փախ-
չելու պարտաւորուել են անտուն
և թափառական : Կառավարութեան
օգնութիւններն անկարող են այսպի-
սի ժգոյթութիւնները թեթեւցելու :
Ռուս ժողովուրդը կը տեսնէ որ իւր
թափած արեան հեղեղներուն շնոր-
հիւ Պալաքներն այսօր նախանձելի
դերը մ'ունին և ամեն տեսակ աղա-
տութիւն կը վայելեն, զոր անկարելի
էր անոնց վաստիկ առանց Ռուսաց
օգնութեան : Երբ Ռուս ժողովուրդն
իւր ներքին վիճակը կը բազմաթիւ
դարաց, Ռուսիոյ Սերիկացոց, Գարա-
տապոց և Հելլենաց վիճակին հետ,
որոց ամենը Ռուսական օգնութեամբ
անկախ եղած են, բնականաբար դա-
ռըն դեպքում մը կուենայ և ամե-
նայն չափազանցութեամբ կը պահան-
ջէ որ իւր կառավարութիւնն ուրիշ
ժողովուրդաց համար ձեռք բերած ա-
ղապարկութիւններէն մաս մ'իւր ժողո-
վրդեան շնորհէ : Գարապուտ ոչինչ
նուազ ցաւալի տալաւորութիւն մը կը
նէ Ռուսիոյ ընծայած այս տեսարանն,
որով Սերիկացի մէջ իւր աղատարար
կը ներկայանայ, մինչդեռ իւր երկ-
րին մէջ աղատութեան տեսչացողնե-
րուն դէմ արքայազնաց և մահաւան
դատաւիճակներ կարծակէ : Գիւլի-
պատերազմական ատեանը մարդ մ'ը
սողիկ մ'ի մահ դատաւարաւորեց, վա-
ւերն զի կառավարութեան թշնամի ըն-
կերակցութեան մ'անդամ էին : Այս
ամեն խտուրթեանց մէջ յեղափոխա-
կան « Հայրենիք և Սղատութիւն » ա-
նուն թերթը դադանի տպարաննե-
րու մէջ կը շարունակէ հրատարակիլ
և ամեն տեղ կը մտնէ : Կառավարու-
թիւնն այն տպարաններէն մին դը-
տաւ, բայց դարմանալի է որ միշտ
դադանի տպարաններ կան : Ռուսիոյ
սոսկականութեան ձեռք առած ամե-
նաբուն միջոցներն, և իւր քաղա-
մարտիկ զօրավարներուն ստորադրած
հրամանագրերն Եւրոպայի զուեշտա-
կան թերթերուն ծիծաղի և հեղեղու-
թեան առարկայ կը լինին : Ամեն մարդ-
կրնայ այս պատկերին նայելով եղբա-
կացնել թէ Ռուսիա իմաստուն և
արդար գործ մ'ըրած կը լինի եթէ
իւր աղատարարութեան դրութիւնը
դանէ մասամբ իւր երկրին մէջ ալ ի
գործ դնէ, ի շնորհս աղատութեան
ժարաւոր պապակեալ Ռուս ժողո-
վրդոց :

Եւրոպական լրագիրը Գերմանա-
ցի մեծանուն աստուածաբան Տօլլին-
կէրի մայիս 1 թուով հին կաթողիկոսաց
հասարակութեան ուղղած մի նամա-
կը կը հրատարակեն, որ հետեւեալ

կարեւոր յայտարարութիւնները կը
պարունակէ :

« Ձեր յայտարարութիւնը խիստ
լու է : (այդ յայտարարութիւնէն 23
հազար օրինակ ցրուած է) : աղ-որ աղ-
դեցութիւնն հեռուէն չեմ կրնար
դուշակել : Եկեղեցական խնդրոյն մէջ
բնաւ կարեւոր բարեփոխում աղա-
սել կարելի չէ լէոն Ժ. Պապէն : Վըս-
տահ եմ որ Պապն (իւր նախորդին
կարգած) կարգիններուն ըսած է
թէ առանց իրենց խորհրդին և հա-
ւանութեան բնաւ բան մի չպիտի ը-
նէ : Նիւման մը (Սնդղիցի) կարգի-
նայ անուանեց, որոյ հանձարը խիստ
բարձր է Հռոմէական կղերէն : սա-
կայն անոր ստույգ կարծիքներն Հը-
ռոմի մէջ չեն դիտարկու : Եթէ անոր
դործերը Գաղղիներէն, խաղերէն կամ
լատիններէն լինէին, ինչպէս դա-
տաւարտեալ զրեանց ցանկը կանց-
նէին : Շատ տարիներէ ի վեր ես կը
ընենմ Պապականութեան ազդեցու-
թիւնը դարեւու մէջ ամեն դար աչ-
քէ անցուցի և մանաւանդ զանազան
պետութեանց և ազգաց վրայ Հռոմի
ազդեցութեան պատմութիւնը սեր-
տեցի : Այս ուսմանցս եզրակացու-
թիւնն այն եղաւ թէ Հռոմի ազդե-
ցութիւնն իմ 1860-ին կարծածէս շատ
աւելի միասնակար և աւերիչ է : »

ՀԱՅ Ք

Գ.

(Երանանկութիւն Թիւ 2328)

Հայոց մատենադրութեան առա-
ւելութիւնն է համար ո՞ն մը և մաս-
նաւոր դիւրիմացութիւն : Պատմա-
կան մասը մեղի համար ամենալաւ
աղբիւրներու թուոյն կարգը կ'անց-
նի : Հայ քահանայապետները միշտ
մատենադրական գործունէութեան
գլուխ կեցան : և ստուգիւ մատե-
նադրութեան եկեղեցւոյ հետ ունե-
ցած անձուկ յարուսն է պատճառը
որուն համար Հայոց մատենադրա-
(օգեղէն) կենացը մէջ ոչ երբեք ըս-
կըղբան (ինքնաշար) ուժեղ բանաս-
տեղծութիւն մը կամ քաղ բնագիտա-
կան քննութիւն մ'երեւաւ : Մինչև
այսօր այս ժողովուրդեան մատենադ-
րութիւնը միշտ դարեան կերպա-
րանք մ'ունի, և ըստ երեւութի
դժուարութեամբ միայն կրնայ եկե-
ղեցական շղթաներէն բաժնուիլ դե-
մեւ աղատ և զուարթ ծնունդներու :
Այս ամենայն այսպէս եղեալ
Հայոց մատենադրութեան թիւնը կը
հեղու ի մեղ ամենայն յարգանք, և
այսօրուան օրս տեսածնիս ինչ է :
Ոչ թէ մեռեալ, այլ թաքմ, յարած
են մատենադրական գործունէու-
թիւնն ու բարձրագոյն կրթութեանց
և աւանդ, այնպէս, ինչպէս աղտու-

ՊԱՏՄԱՆՔ

Գուրա զնացած լրագրաց ճառ
ճախըր Խորագրութեան վրայ :
Լրագրոյն վերաբերեալ ինչ
կամ որ և իցէ գրութիւն խորագրի
— Տնօրէնին պիտի ուղղուի : Գալա-
թիա Սանտրքըտը չտարածել թիւ
198, Եօրօ խան : Գալաթի գրութեան
եակը :
Հանրու ճախըր Խորագրութեան
մակ չընդունուի :
Չտարած նամակ : Եօրօ, Լէ
եւ չեն տրուի :



կան ազգաց կը վայելէ : Միշտ ուր
և իցէ այս ժողովուրդեան հատուած
մը որ դաղթէ, անմիջապէս ասոր
մարդիկը կ'ունենան բաղձանք կար-
գալու և սորվելու : Հայը ունին ի-
րենց անձնական բարձրագոյն ուսում
նարաններն ու տարարաններն, Էջմիա-
ծին, Թիֆլիզ, Կ. Պոլս, Զմիւռնիա :
Երուսաղէմ, Մատրաս, Կալիթա,
Վիեննա, Մոսկուա, Պետրապոլիզ,
Վիեննի, Փարիս, Սանտրաս :
Իրենց հին հայրենի աշխարհն ալ
վրով դպրոցները կը յաճախուին,
այսպէս, Վան, Երզրում, Երզնկեան,
Բարեդ, Խարբերդ, Մուշ, Տիար-
պէքեր : Հայերէն լեզուի լրագրութե-
րը տարուէ տարի կը բաղանան ու
կը լաւանան : Տաճկաստան հրատա-
րակուած լրագրաց ամենէն ազդե-
կուն հանձարեղ գրուածներն Հայոցն են,
որոնց համար կարծես թէ լրագրու-
թիւնը բնածին արհեստ մի է : Գեր-
մանիայի ու Սնդղիայի համալսարան-
ներուն՝ համեմատութեամբ ուրիշ
ժողովուրդոց՝ Հայոց չափ ուսանող խըր-
կող չկայ :

Այս մտաւորական գործունէու-
թիւնն որ Հայոց համար ոչ բունագ-
բօնեալ այլ ինքնաշարժ է, և ի մէջ
ցաւոց և զոհից մինչև ցոյսօր փու-
թով անուցուած, ստուգիւ տալացոյց
մի է որ պատմութիւնը Հայոց հա-
մար չէ գոյուած տակաւին : Եթէ
ասոր վրայ աւելցուի ազգային զգաց-
ման հաստատման անասան զօրու-
թիւնը, իրենց վրայ իւր խնայողու-
թիւնը, իրենց գործունէութիւնն,
ու արուեստը, մարքութիւնն ու ըն-
տանեկան կենաց ջերմութիւնը, ի-
րենց որ և իցէ ապականիլ անորդու-
թեան դէմ ընդդիմութիւնը, այն
ժամանակ են ասոնք այնպիսի առա-
քինութիւնը, որոնց հիման վերայ
այն ժողովուրդը զոր մեզի Հայոց
պատմութիւնը ցուցուց, տակաւին
չատ երկայն կը դիմանայ, և յապա-
գայ ժամանակա դարձեալ ծաղկելու
կրնայ սկսիլ : Շատոնց ի վեր Հայոց
ոչ միայն երկրագործութեան, վա-
ճառականութեան, արուեստից, գը-
րականութեան և դիտութեանց մէջ
ցուցուցին իրենց տաղանդը, այլ նա-
եւ բաղմաթիւ քաղաքաշինոց, դո-
րավարաց, օրախի են Նուպար, Կա-
չան, Տատեան պէյն ու Օսեան Է-
ֆէնտին, կամ Լադարէֆի, Լորիս Մէ-
լիքովի ու Տեր Գուկասովի պէս ան-
ձինքը յայտնեցին թէ Հայոց մէջ ո՞ր
պիսի քաղաքական, գեղաստեղծա-
կան և զինուորական հանձար ծած-
կուած կեցած է : Ժողովուրդեան մը
պատմական կենաց տեւի իշխանա-
լից են այն բարիքները զորոնք Հայոց
կը վայելեն, այն է հարուստ կրթեալ
լեզու մը, բաւական արժէք ունեցող
ազգային գրականութիւն, յատուկ
ազգային եկեղեցի մը, հին ստաց

առաջ մ'աշխարհի, և ի վեր քան
զամենայն՝ մեծ գրամական միջոց՝
միացեալ զոհեալ պատրաստակամու-
թեամբ, որ միշտ պատրաստ է և ա-
ռասաղգային վախճաններու համար-
բաւական մեծ առաւելութիւն հաշ-
ւելու է նաեւ դայն՝ որ ասոնք իրենց
անուամբը և ազգին մեծագոյն մա-
ռամբը տակաւին իրենց հայրենիքը
բռնած են, և թէ այս երկիրը լաւ
գրեւթ, պտղաբեր և առաջի է, և
մինչև լեռանց անտառները բարձրութիւ-
նը մշակուելու ենթակայ է: Գինին
կըյաղողի նաեւ ծովէն մինչև 4000 ոտը
բարձրութեանց վրայ:

Հետեւեալ է:

Մայրաքաղաքին Մաթէն լրագիրն,
որ դադարեալ Սթամպուլին տեղ կը
հրատարակի, իւր երէկուան թուով
հետեւեալ յօդուածն հրատարակած
է, որ ամեն Հայու ուշադրութեանն
ու գոհութեան արժանի է:

«Այսօրուան օրս ոչ ոք կը հա-
մարձակի ժխտել թէ Թուրքիոյ գըլ-
խուն եկած փորձութեանց պատճառն
իւր վարչութեան այն ողբալի սոփո-
րութիւնն է, որով նոյն իսկ ամենա-
կարեւոր գործոց լուծումն օրէ օր ձը-
գեալով կը յաղագէտ:

Այս ճշմարտութեան համոզուելէ
ետեւ, ինչո՞ւ համար այդ ծանրամիտ
միալեւնաց մէջ վերտալին չիցաւու հոգ-
չտարուիր:

Ձեռք գիտեր: Բայց կը հաստա-
տեմք թէ բնաւ փոյթ չկայ ուղղուե-
լու, և թէ ամեն գործք՝ մեծ ու փո-
քոր՝ իրաց առջի փիճակին մէջ թող-
ւած են, փիճակ մը, որոյ հետեւան-
քը չկրնար ուշ կամ կանուխ աղիտա-
բեր չլինիլ:

Այսօր իւր օրինակ ձեռք առ-
նումք Հայկական խնդիրն, որ ծանր
խնդիր մ'է:

Ս. Ներսէս Պատրիարքը քանի
մ'ամեն ի վեր հրաժարական տուած
է, այս պատճառաւ որ կառավարու-
թիւնը չէր ուզած կատարել իւր ար-
դար խնդիրները՝ զորս կը ներկայէր
Ձէյթունի Հայոց վրայ եղած բռն-
ութեանց, յիշեալ գաւառին մէջ
տեղի ունեցած ապօրէն ձերբակա-
լութեանց, և եկեղեցականաց անար-
դար բանտարկութեան մասին, որք
գէթ Պատրիարքարանին պէտք էր
յանձնուէին, եւ եւ:

Այս հրաժարականը տրուելուն
պէս, ոստիկանութեան դուռը բան-
տարկեալ եկեղեցականքը Պատրիար-
քարանի յանձնուեցան:

Ուրեմն Պատրիարքն իրաւունք
ունէր բողոքելու, և եթէ արդա-
րութիւնն աւելի շուտ ի գործ դըր-
ւէր, իւր աթոռին վրայ պիտի մնար:
Ընդհակառակն, Ներսէս Սրբա-
ղան այս անագան հատուցումն ան-
բաւական դասելով՝ իւր հրաժարա-
կանին վրայ կը պնդէ:

Հալէպ և Մարաշ զրկուած յանձ-
նախումբն հոն տմիաներէ ի վեր բան-
տարկեալ բազմաթիւ Հայեր արձա-
կել կուտայ:

Ուրեմն Պատրիարքն իրաւունք
ունէր երբ Բ. Դրան մօտ իւր թա-
խանքանքն անդադար կը կրկնէր
այդ դժբաղդներուն ազատութեան
համար, որոց մի քանին բանտի մէջ
մեռած են:

Ներսէս Սրբաղան այս վերջին հա-
տուցումն անագան և մանաւանդ ան-
բաւական կը դնէ. վասն զի տակա-
ւին բազմաթիւ Հայեր բանտարկեալ
են. Ձէյթունի բնակիչք կը շարունա-
կեն գանգատիլ արոց ծանրութեանն,
Ձէրքէններուն և Քիւրտներուն միշտ
անպատիւ քննարկ չարագործու-

թիւններէն, ուստի Պատրիարքը կը
պնդէ իւր հրաժարականին վրայ:

Միւս կողմէ, Հայ հասարակու-
թիւնն իւր Պատրիարքին անգադար
մատուցած ծառայութիւնները ճան-
չելով, իւր հօտին բարեւոյն համար
ցուցած անխնայ եռանդն ու անձնը-
ւիրութիւնն հաստատելով, միաձայ-
նութեամբ կը մերժէ անոր հրաժա-
րականը:

Պատրիարքը դարձեալ կը պնդէ
իւր որոշման վրայ, և արդէն ըրած
երկար ջանքերէն յոգնած՝ դիւղը կը
քաշուի քիչ մը հանգիստ առնելու
համար:

Սակայն Ազգային վարչութեան
փիճակը կանոնադրելու համար Պատ-
րիարքն ու Ազգը Պատրիարքական
փոխանորդ եպիսկոպոս մը կը ներկա-
յեն Բ. Դրան: Բ. Դուռն այս առա-
ջարկն անպատասխան կը թողու և
այսպէս Բ. Դրան և Պատրիարքարա-
նի միջև յարաբերութիւնը պաշտօ-
նապէս դադարեալ կը մնայ:

Այս անկանոն փիճակէն ծագած
նիւթական անպատեհութիւններն
հարկ չեմք համարել մի առ մի նը-
շանակել, ոչ ալ բովանդակ ազգին
հասուցած քննանքերը կը յիշեմք: Բայց
անհնար է ուշադրութիւն չհրաւիրել
այս տարօրինակ իրողութեան վրայ
թէ Օսմանեան կառավարութեան 3
միլիոնէն աւելի Հայատակաց հոգե-
ւոր և քաղաքային ներկայացուցիչն
եղող Պատրիարքարանին և Բ. Դրան
միջև յարաբերութիւնը պաշտօնա-
պէս դադարած են:

Եւ սակայն չեմք կարծեր որ Բ.
Դուռը փոխանորդին ընտրութեան
դէմ լռելով առաքիւթիւն մ'ունենայ-
աւելի հաւանական կը թուի մեզ թէ
այս անկանոն փիճակն այն դանդա-
ղանաց և վարանմանց արդիւնքն է,
յորոց ամեն մարդ կը գանգատի ա-
ռանց երբէք դադարումը տեսնելու:
Բայց թողք՛ք որ այս անկանոն փի-
ճակն ինքնին շատ ցաւալի է, միւս
կողմանէ սա ամենատարբեր իրողու-
թիւնը կայ որ Ասիոյ Հայոց դան-
գատները միշտ կը շարունակեն:

Այս առթիւ անպատեհ չլինիլ
յիշել Պէրլինի դաշնագրութեան ՅԱԳ-
յօդուածն, որ կըսէ.

«Բ. Դուռը լսօք կուտայ անոնց այլ
«ևս յապաւելը՝ գործադրել այն բարեու-
«քունքներն ու բարենորոգումները,
«զորս տեղական պէտքերը կը պահան-
«ջեն Հայոց բնակած գաւառներուն
«մէջ, և անոնց տարահամութիւնն եւ
«քաղաքները Ձէրքէններուն և Քիւր-
«տներուն դէմ: Բ. Դուռն այս նպա-
«տակաւ ձեռք առնուած միջոցները
«պարբերաբար պիտի ծանուցանէ տէ-
«քութեանց, որք անոնց գործադրու-
«թեան վրայ պիտի հակեն:»

Արդ, Պէրլինի դաշնագրութեան
ստորագրուելէն ի վեր, որ 1878 յուլիս
13ին տեղի ունեցաւ, դեռ թէ տան
և մէկ ամիսանցած է, Հայոց կողմանէ
նորանոր գանգատներէ զատ ուրիշ
բան չկեցինք, և ցաւելով պէտք
է խոստովանիմք թէ գանգատներն
հիմնաւոր են:

Սակայն Ասիոյ մէջ գործադրուե-
լիք բարենորոգմանց ամենուն հա-
մար ալ դրամ հարկուող չէր: Եւ ար-
դարեւ քանի մ'աւարառու և մար-
դասպան Քիւրտներ ու Ձէրքէնք
պատժելու համար դրամի պէտք չը
կար. և ոստիկանութիւնն, որչափ
անկատար ալ լինի, ի հարկին կանո-
նաւոր զօրաց ալ օգնութեամբ, կըր-
նար այն չարագործներէն մի քանին
ձեռք անցունել, որ չեղաւ: Մեք
Բ. Դուռը չեմք ամբաստանել թէ
այդպիսի չարագործութեանց թող-
տութիւն կընէ, այլ իւր ներկայա-
ցուցիչները կամբաստանեմք, որ այդ

չարագործները կրնան բայց չեն ու-
ղէր պատժել:

Ասիա զրկուած երկու յանձնա-
խմբերէն միոյն արդարութեան ա-
ռաջին գործն յիշեցինք, որով Մա-
րաշի և Հալէպի մէջ բանտարկեալ
Հայոց մէկ մասն արձակել տուաւ:
Բայց ըստ որում հաստատուեցաւ թէ
այդ մարդիկն յանրաւի բանտարկ-
եալ էին, պէտք էր պատժել այն
անձինքն որք բանտի մէջ մեռած
ներուն մահուան պատասխանատու
կը մնան:

Մեք յիշեցանք որ մէկը պատ-
ժուած լինի՝ ոչ այն պաշտօնատար-
ներէն՝ որք Սուլթանին հաւատարմ
Հայատակաց վրայ բռնութիւն բանե-
ցուցին, ոչ ալ այն չարագործաց հը-
րոսախմբերէն որք անդադար կը կե-
ղեքեն Հայերը:

Կաղաչեմք Բ. Դրան որ յանձ-
նախմբեր զրկելով ըրած արդարու-
թեան առաջին գործն ամբողջացնէ՝
բայց որոշ հրամաններ տալով անոնց,
որպէս զի այլոց օրինակ լինելիք պա-
տիճներ տնօրինեն:

Պէրլինի դաշնագրութեան ՅԱԳ-
յօդուածն յիշեցինք. միթէ ծանրա-
պէս անհաճոյ չլինի Բ. Դրան եթէ
յիշեալ յօդուածին գործադրութիւ-
նը մեծ տեղութիւնք յիշեցնեն իրեն:

ՀՆՈՒԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Լոնտոն 30 մայիս.
Գաղղիոյ և Անգլիոյ միջև Եղիպտոս-
կան խնդրոյն նկատմամբ բանակցութիւնք
տակաւին կը շարունակեն քանի մ'երկ-
րորդական կէտերու վրայ, բայց վերջ-
նական համաձայնութիւն մը մօտալուտ է:

Պէրլին 30 մայիս.
Կէս պաշտօնական Նորտ Տայչէ Ալի-
մայնէ Յայթունի լրագիրն իւր այս աւուր
թուով յօդուած մը կը հրատարակէ ի-
տալիայէն դուրս մնացած իտալական
գաւառաց իտալիոյ հետ միանալն ուղղող
կուսակցութեան ցոյցերուն նկատմամբ,
կուսակցութիւն մը, որ թէ՛ իտալիոյ սա-
մանագրութիւնը կը հարուածէ և թէ՛
իտալիոյ կառավարութեան Աւստրիոյ հետ
ունեցած յարաբերութիւնները: Գերմա-
նական թերթը կեղծակցանէ յիշեցնելով
իտալական կառավարութեան թէ այն-
պիսի ցոյցերու թողութեան ընելը
թէ՛ իրեն և թէ՛ զրացի տէրութեանց ա-
պահովութեան վտանգաւոր է:

Ս. Կառաւոր հասած հետաքրք-
Մարտի 30 մայիս.
Պ. Ֆուրնիէ երէկ իրիկուն Բէթթէլ
չող ետաւով ծանրաց եւալ իւր պաշտօնա-
տեղին (Կ. Պոլս) երթալու համար:

Լոնտոն 30 մայիս.
Տէյլի Թէլէգրաֆ լրագիրը լուր կու-
տայ թէ Գաղղիա առաջարկեր է Անգլիոյ
երկու հսկող տեսուչ անուանել Եղիպտո-
սի համար, մին Գաղղիայի և միւսն Անգ-
լիայի: Յիշեալ տեսուչներն անհաճման
իշխանութիւն պիտի ունենան երկրին գոր-
ծոց հսկելու համար:

Օտլա 30 մայիս.
Կայսրը Լիվադիայէն պիտի մեկնի վա-
ղը (չարաթի) և յաւաքիկայ երեքշաբթի
օրը Բեդրասուրի պիտի հասնի:

Փարիզ 30 մայիս.
Փէրուի Լիւմա նաւահանգիստին եկած
հեռագիր մը կը ծանուցանէ թէ երկու
Բերացի զրահաւորք և երկու Քիւրցի
փայտաշէն պատերազմիկ նաւեր կու-
րենուեր են իրարու հետ, և երկու Քի-
ւրցի նաւերն և Փէրուցի զրահաւորներէն
մին ծովապոյզ եղեր են:

Քոթոն 30 մայիս.
Էտնա լեռան հրաբուխին բորբոքումը
կաւեցիայ:

Լոնտոն 30 մայիս.	
Օտլ. Բօնու.	11 7/16
Փոլս. 1863	45
» 1869	43 7/8
» 1871	47 3/4
» 1872	20 1/2
» 1873	
» Կղկպու.	61 7/8
Անգլ. Բօնու.	99 4/8

Փարիզ 30 մայիս.	
Օտլ. Բօնու.	11 47 1/2
Գաղղ. Բօնու.	30 0
» »	31, 2 1/2
» »	35 30
» »	50 0
» »	113 45

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Բ. Դրան կողմանէ փարիզի Օսման-
եան դեսպանատան քաշուած և Գաղ-
ղական լրագրաց մէջ պաշտօնապէս
հրատարակուած հեռագիր մը կը
ծանուցանէ թէ Լաւրիայի (Թեսաղի-
ոյ) Օսմանեան հրամանատարին տուած
տեղեկութեանց նայելով, հելլեն ա-
պրատամբ անտառի մը մէջ դարա-
նամուտ լինելով 46 Օսմանեան զօրաց
վրայ յարձակել և անոնցմէ 14 հո-
գին սպաննելով, մարմինները յօշո-
տեր և ծառերէ վար կանխել են:
Օսմանեան զօրաց վրայ ի գործ դըր-
ուած այս խժոժական գործը Թեսա-
ղիայէն եկած ուրիշ տեղեկութեամբ
ալ հաստատուած է:

Վաղըթ լրագիրն իւր երէկուան
և այս աւուր թիւերով բուռն յօդ-
ւածներ կը հրատարակէ Ալէքս. փա-
շային Գալիպոլ դներուն նկատմամբ,
ամբաստանելով զայն թէ խաժամու-
ժին ցոյցերուն առջեւ տկարանալով
Ֆէսն հաներ ու Գալլաթ դերք է-
մինչդեռ, կը յարէ Թուրք լրագիրն,
հոս Կ. Պոլսոյ մէջ կառավարութեան
զրաւորապէս լսօք տուած էր թէ
Ֆէթը չպիտի հանցի երբէք:

Բ. Դուռն եկած հեռագիր մը կը
ծանուցանէ թէ Լոնտոնի Օսմանեան
դեսպանատան զինուորական կողմը
Ապուլլա հփէնտին՝ Վիքթորիա թա-
դուհւոյն ծննդեան տարեդարձին
առթիւ կատարուած հանդիսին ժա-
մանակ ձիէն իջնալով անմիջապէս մե-
ռեր է:

Ազգայնապաշտէն եկած լուրեր
նահանգին ներսերը տեղի ունեցած
աւաղակութեան դէպքեր կը ծանու-
ցանեն միշտ, Մանաւանդ Կիւմիւր-
ճինայի դուռան մէջ բազմաթիւ
Ռօտարիոյ գաղթականքը դանուելով,
սոյն օրինակ դէպքերն անպակաս են:
Կիւմիւրճինայէն Մարմիա դնացող 15
անձանց կարողանի մը վրայ, որոց
հետ պահապան զինուորք ալ կը գըլ-
նուէին, գողեր յարձակելով, անոնց
և զինուորաց միջև հրացանի կռիւ
կը ծագի, բայց աւաղակներէն մին
սպաննուելով, զինուորք անոր գը-
լուիւ կը կորեն և Կիւմիւրճինա կը
զրկեն: Նահանգին կուսակալ Բէուֆ
փաշան հրաման ըրեր է որ բոլոր
կառիւթները անձինք Կիւմիւրճինայի
գաւառէն արտաքսուեն՝ եթէ չկրնան
երաշխաւորութիւն տալ. բայց յիշ-
եալ գաւառին մէջ բաւական թուով
ոստիկան չգտնուելուն պատճառաւ,
այս օգտակար տնօրինութիւնն ան-
գործադրելի մնացած է:

Երեքշաբթիէն չորեքշաբթի լուս-
նայու դիշերը Բերայի Սաբըղ Աղաճ
փողոցը բնակեալ 45—50 տարեկան
Հայ մ'ինքզինք իւր տան ջրհորը նե-
տեց, ուստի ճինգշաբթի օրը դի-
ակը հանուեցաւ:

Այս անձնապաշտութիւնը խնկա-
դարութեան արդիւնք է կը կարծուի:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ԵՍԶԱՄԸ ՈՒՄՈՒՄԻԷ	
Երէկ իրիկուն գողուեցաւ	42.18
Այս առաւոտ բացուեցաւ	42.18
Կէս օրին	
Բուլիլի երկաթուղի	Ֆր. 47.
Թղթաղրամ	Լիւ. 1140

ԸՆԹԱՑԻ ԱՐԺԱՅԻՆՆԵՐ

18 Մայիս	
Ստիւթէ ձէնէրալի բաժ. Անգլ. լիւր. 4.	
» Փոխանակութեան	3.20
Կ. Պոլսոյ Պանքային	6.10
Քրէտի ձէնէրալ	3.
Փոլս. 1863	Ֆր. 78
» 1865	» 70

• 1869	• 68
• 1872	• 20 1/2
• 1873	• 63
Թրամաւայ	Օտմ. լիւր. 2 85
ԸՆԹԱՅՔ ԴՐԱՄԱՅԻՆ	
19 Մայիս	
Անգլ. լիւր.	109 30
Դարձեալ անգլ.	87 28
Իմպրիալ լիւր.	90 40
Գլխաւոր	31 20
Գլխաւորի տարբերութիւն	6 16
Հինգ շաբաթ	45
Պրիմա	168

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

Աղագային ժողովն երէկ իւր երկ-
րորդ նիստն ըրաւ ընդ նախագահու-
թեամբ Պատրիարքական փոխանորդ-
Քեր. Մատթէոս եպիսկոպոսի և ա-
տենապետութեամբ Մեծ. Տ. Եռ-
սուփեան էֆէնտիի :

Նախընթաց քննարկման նիստերուն
ատենագրութիւնները վաւերացուց-
ւելուց, զիւսմանը յետոյ զաւանդե-
րեալ նիստն ընտրուած Մեծ. Պէր-
պէրեան Ռեթէոս էֆէնտիին ընտրու-
թեան տեղեկագիրը ներկայացուց,
որ օրինակորդ տնտեսելով վաւերա-
ցաւ :

Յետոյ նորընտիր Ա. ատենապետ
Վահմ. Գ. Օտեան էֆէնտիին զրկած
հետեւեալ հրաժարագիրը կարդաց-
ւեցաւ .

24/12 մայիս 1879 Բերա

Ամեն. Սրբազան Նախագահ .

Բարեկամք և օրագիրն Մատիւ
աւանդելին ինձ զանաւանուած իմ յա-
տենապետութիւն ընդհանուր ժո-
ղովոյ : Յետազգումսայ բացակայու-
թեան ի ծոցոյ աղագային երեսփո-
խանութեան, ինչ մեծ միւլթարու-
թիւն ինձ համար, որ հազիւ անգամ
ընտրուած, ընտրուիմ նաև նորէն
զրուի իւր զիւսմանը : Երբ աղագային
երեսփոխանութիւնը և ի նա աղագ-
այսպիսի պատիւ մը կրնէ ինձի, կը
մտնուի սիրտս մտածելով թէ բա-
ցարձակ անձնուիրութենէս զատ ու-
րիշ արժանիք մ'ունեցած չեմ և չու-
նիմ : Քանի՜ առաւել ցաւ է ինձ որ
յետ վայելելու զայս պատիւ՝ պար-
տաւորեալ եմ հրաժարելու պաշտո-
նէն : Այլ եթէ աղագային երեսփոխա-
նութիւնը կը հաւատայ թէ մինչև
հիմա իմ անձնուիրութիւնս չը ստեց
աղագին, կընդունի նաև հրաժարու-
կանս հաւատարմով, առանց վիճա-
բանութեան, որ անկարելի է, թէ
շարք է ինչ հրաժարել : Շատ է եթէ յա-
ջողմ ոչ առաջ ժամանակ իրը երես-
փոխան ծառայել աղագին :

Եւ արդ զի կը հաճի ընդհանուր
ժողովը որ մնամ երեսփոխան, կը
նեղեմ արդեօք որ իւր այն՝ յայտնեմ
իմ ցաւս տեսնելով Ատենապետի ու-
թեան որ կը զրկուի այն անձէն, որ
այնքան տարիներ վարեց Ատենապե-
տութեան պաշտօնը այնքան տաղան-
գով և այնքան իմաստութեամբ, որ
իր անկապտելի յատկութիւններն են,
և անտարակոյս նաև անաչառ ան-
կողմնակալութեամբ, որ ամեն Ատե-
նապետի առաջին պարտաւորութիւ-
նն է :

Որչափ սիրելի և փափաքելի ինձ
համար և յուսամբ երեսփոխանաց հա-
մար՝ իրմէ միայն առաջնորդուիլ մեր
վիճարանութեանցը մէջ, վիճարա-
նութիւնը, որք աներկիմտ եմ թէ
խաղաղական և միայն օգտակար պի-
տի ըլլան աղագին համար :

Մնամ Ամենապատիւ Սրբազնու-
թեանը և ամենասիրելի Հօրդ-
Ամենախնայ ծառայ
և խանդակաթ որդի
Գ. Ս. Օտեան

Ժողովն այս հրաժարագիրը տրու-
մութեամբ ընտրուի, ինչդրեց Նախա-
գահ Սրբազանէն և Գիւսմէն որ
Օտեան էֆէնտին տեսնելով հրաժա-
րականն ետ առնուի տալու ջանան,
և եթէ անտնօրինելի արգելք մը կայ՝
իմանան և ժողովին հաղորդեն :

Սոյն միջադէպէն յետոյ ժողովն
օրակարգին անցնելով նախաքննիչ
գիւսմանց ընտրութիւնը կատարեց
Գիւսմէն ներկայացեալ հետեւեալ
ցանկին վրայ՝ որ անմիջապէս ըուէր
մեծամասնութիւն ստացաւ :

Զեւոնդանութեան Դիւան

Տ. Խորէն եպիսկ. Նարպէյ
Տ. Մկրեան Հայր
Եռսուփեան Տ. էֆէնտի :

Գաւառականութեան Դիւան

Սերգիւն էֆէնտի
Ստեփան փաշա
Գ. Զերալ էֆէնտի :

Կալուստեան Դիւան

Յ. Կրճիկեան էֆէնտի
Ա. Ունճեան
Մ. Գալաթիսեան :

Համալսարանութեան Դիւան

Ս. Փափաղեան էֆէնտի
Հ. Մազպուլեան
Բ. Ղազարոսեան :

Թարգմանութեան Դիւան

Յ. Լաւան էֆէնտի
Բ. Հալաբեան
Պ. Պաւստան :

Իրաւագիտութեան Դիւան

Տ. Ներսէս վարդապետ
Ալթուն Տիւրքի էֆէնտի
Ն. Օտեան :

Նախախնայութեան Դիւան

Տ. Սեփարդեան էֆէնտի
Յ. Մէրեմ-Ղուրի
Մ. Զօպանեան :

Խնայողութեան Դիւան

Կ. Իւթիւնճեան էֆէնտի
Գ. Մէլիքեան
Հ. Ալաճանեան :

Այս ընտրութենէն ետեւ՝ ժողովն
օրակարգին երկրորդ խնդրոյն ան-
ցաւ, և կարճ վիճարանութենէ մ'ե-
տեւ, այլ և այլ ժամանակ Հայաստան
զրկուած քննիչներուն գործերը քնն-
ներու և ժողովին տեղեկագրելու
պաշտօնը խորհրդարանական յանձ-
նախմբին յանձնեց :

Քաղ. ժողովը՝ կեդրոնական սնու-
տուկին Պիւտիէն պատրաստած և
Մայր գիւսման յանձնած լինելով,
նախաքննութեան յղուեցաւ :

Ժամ 9 1/2ին ատենը վերջաւ 15
օրէն դուրսարեւու որոշմամբ :

Պատրիարքական փոխանորդի պաշ-
տօնին վաւերացման խնդրոյն համար՝
այսօր վարչութեան կողմէն խառն
պատգամաւորութիւն մը պիտի եր-
թայ Բ. Գուսմէն և Մեծ-Եպարդոսին
ներկայանայ :

Թ. Գ. Ա. Զ. Ո. Ի. Ն. Մ. Ա. Ս. Ի. Ն. Մ. Ա. Զ. Ո. Ի. Ն.

Ն. Մ. Ա. Զ. Ո. Ի. Ն. Մ. Ա. Զ. Ո. Ի. Ն.

2 մայիս 1879.

... Խմբագրապետ « Մատիւ » օրա-
թերթի :

Այսօր կարդացի « Մատիւ » և Պոլսոյ
թղթակից յարգելի « Հայկական » համակը,
« Սրբաբան » ընկերութեան չորրորդ
տարեգարծի առիթով եղած խնդրի (բէ-
ֆի) նկարագիրը : Սիրտս ու հոգիս փա-
ռաւորվում էր, երբ կարդում էի : Ներկա-
ւանգամ, — երբ անգամ կարդացի, —
նամակի մէջը դժուար և անհասկնալի
բան չը կար : Բայց կարդալիս կարծում
էի, թէ ևս չէ այդ հանդիսի մէջն եմ :

զէլ բաժանեալ պարագիծով և կեցցէ Հա-
յաստան աղագայելով : Ես ևս ուրախա-
նալիս և մասնակից եմ եղել այդ տեղ
արտայայտած մտքերին, զգացմունքնե-
րին և Հայութեան վերականգնման գա-
ղափարին ցոյց տրուած համակրական
ցոյցներին : ... Նոյնպէս կը խնդրեմ չը
կարծել, թէ միայն ես եմ եղել որ կար-
գալիս զգացել եմ այդ խնդրի մէջ լի-
նելու և հոգւով, սրտով, մտքով : ...
այդ բոլոր խնդրակից, այլ թէ Ռուսի-
այի հայաստի և յառաջագիւղ Հայերն ևս
մի և նոյնն են զգում, երբ կարդում են
Ձեր Հայերի յառաջադրութեան և ու-
րախութեան լուրերը : Շատ չնորհակալ
ենք նախ և առաջ « Սրբաբան » ընկե-
րութեան բոլոր աշխատողներին որ մինչև
անգամ « Բէֆի » ժամանակ ևս յիշում են
Հայաստանը : Դրա եղբայրաբար ընդու-
նել և պատուել են Պոլսում եղած միւս
ընկերութիւնները, ընդունելով նոցա
ներկայացուցիչներին, որոնց նպատակը
ևս միևնոյնն է, ինչ որ « Սրբաբան »-
նը : Շնորհակալ ենք Երեսփոխան հա-
նաւոր լրագրաց պատուելի թղթակից-
ներին, որոնք պատուաւորել են այդ
հանդէսը իւրենց ներկայութեամբ,
արտայայտած զգացմունքներ և ցան-
կութեանց համար : Վերջապէս, շնորհա-
կալ ենք, որ մեզ Ռուսիայի Հայերի ևս
յիշել են այդ ուրախ բողոքներում : Հա-
ւատացած կացէ՛ք, որ մենք ևս ամենայն
ժամանակ մեր հացիկերոյթներն մէջ չենք
մոռանում ոչ Մայր Հայաստանին և ոչ
այն ընկերութեանց կամ անձանց որք
Տաճկաստանում Հայութեան համար ան-
կեղծօրէն աշխատում են : Թէպէտ ան-
ձամբ մենք սրտով չունինք ճանաչե-
լու, բայց մեր ամենիս բերնումն է Մեծ.
Գրիգոր էֆէնտի (Օտեանի), Ստեփան
փաշայ Ստանեանի և ուրիշ շատ հայա-
սէր Հայերի անունները, որք մեզի ըն-
տանեկան են դարձած : Մեր ճաշկերպ-
ները պատահական են լինում, այս կամ
այն անձը ցանկացաւ « Բէֆ » անելու,
հրաւիրում է իւր ծանօթներին և զը-
ւարճանում : պէտք է խոստովանինք, որ
դուք այդ դրո՞ւմ անելի նպատակաւոր
և աւելի յառաջադէմ էք :

Այսօր 29ին, կիւրակի երեկոյին, Պ.
Գուկտոր Նիւմանեանը մի հրապարակաւ
բանախօսութիւն արեց « Վիլիկիայի » մա-
սին Տիւրքի ժողովարանի մեծ դահլի-
ճումը : Դահլիճը լիքն էր այցելուների
բազմութեամբ, չը նայելով որ մի և նոյն
երեկոյին Հայերէն թատրոն կար մի այլ
տեղ, և մեծ հետաքրքրութեամբ լսում
էր Պ. Բանախօսի տուած տեղեկութիւն-
ները : Հասարակութիւնը մեծ համակրու-
թեամբ ընդունեց Մեծ. Բանախօսին և
վերջն էլ ազմակի ծափահարութիւննե-
րով շնորհակալութիւն արեց : Հաւաքած
դրամները յօգուտ « Վիլիկիան » ընկերու-
թեանն էր : Ծափաբեր դուրս դալով,
կարծեմ մօտ 250 ուրլի կը մնար դուռ
օգուտ և ոչ առաւել, որովհետեւ տոմ-
սակներն ըստ սովորութեան աժանագին
են լինում, որպէս զի դիւրամատոյց լինի
Հասարակութեան : Ի դէպ է ասել, ին-
չո՞ւ բոլորովին տեղեկութիւններ, լուրեր
և հրաւիրանքներ այդ ընկերութեանը
նպատակը՝ չեն տալարվում ոչ Ձեր և
ոչ մեր լրագիրներին մէջ : այն ինչ ամե-
նահարկաւոր դրո՞ւմերն մինչ է այժմ
այդ Վիլիկիայի տառապեալ ժողովուրդը
դո՞ւն ուսումնարաններով միւլթարել :

Թողնելով մեր լրագիրները մանրա-
մասն խօսելու Պ. Նիւմանեանի դասախո-
սութեան մասին, ևս միայն մի կէտի
վերաբերութեամբ կը խնդրեմ ուշադրու-
թիւն Ձեր « Մատիւ » կարդացողներին :
Պ. Բանախօսը յիշեց իւր բանախօսու-
թեան մէջ, թէ « Լաւ կը լինի որ Հայ
վաճառականները յարաբերութիւն ու-
նենային և տներ հաստատակին « Վիլիկիա-
յի » մէջ նոյն իսկ օգուտ ստանալու նը-
պատակով :

Ահա այդ հարցն էր, որոյ առիթով
փոքր ինչ մտադիր եմ խօսելու : Ինչպէս
Ձեզ ևս յայտնի է, Հայաստանից ամե-
նայն տարի դէպ Սնդրիովկայի բաղաճնե-
րը գալիս են շատ գիւղացիներ և Հայ
մշակներ, որոնք մնում են երեւմէն շատ

տարիներ պանդխտութեան մէջ, որպէս
զի կարողանան փոքր ինչ վաճառի ունի-
նալ և դրամ ձեռք բերել : Ձարմա-
րան է, որ Տաճիկ կառավարութեան
մինչև այժմ չէ մտածել և չէ էլ աշխա-
տում իւր ոյժեր իւր մէջ դործածել ու
յարմարութիւններ տալ նոցա : Ինչ տուել
կուզէ, որ այդպէսով օր առօր սնան-
կութիւն չընկնի Տաճկաստանում : Երկ-
րորդ, ինչո՞ւ Ռուսաստանից կամ ու-
րիշ տէրութիւններից մշակներ կամ դիւ-
ղացիներ չեն դադարում դէպ ի Հայաս-
տան դործ ձարելու և դրամ վաստակելու
համար : Գլխաւոր պատճառներից մինը
ևս այն պէտք է լինի որ դործ չը կայ
Հայաստանում, թէպէտ դիտէք, որ
Հայաստան երկիրը շատ պտղաբեր և
արդիւնաւոր է :

Մնացեալն հետեւեալ թուի :

... Խմբագիր Տէր :

Ընտրողական ժողովս կը խնդրէ
որ բարեհաճիք ներքոյգրեալ աղագ-
ձեր աղագօգուտ լրագրոյն մէջ հիւ-
րենկալել, որոյ համար մեր շնորհա-
կալիքը կանխաւ յայտնել կը փու-
թամք :

Ը. Զ. Գ.

Ա. Երեսփոխանական ընտրող Պա-
լատութիւն

Թաղիս Մեծապատիւ Երեսփո-
խաններէն հրաժարեալ Թերլանեան
էֆէնտիին յաջորդ վսեմ. Օտեան էֆ-
էնտիինցաւ թէ ևս մեր նախորդ քը-
ւէարկութեամբ, սակայն Բերայի թա-
ղէն ևս քուէ վաստակելի իւր հըրա-
ժարութեան մեղ տուած է, որով և
կրկին քուէարկութեան պէտքն ան-
հրաժեշտ զգալի եղած է մեզ :

Ուստի հրաւեր կը կարդանք ընտ-
րելու իրաւունք ունեցող Մեծ. թա-
ղեցոյ, որպէս զի փութան իրենց
իրաւունքն դործագրել :

Ընտրողաց մի դիւրութիւն տա-
լու համար ներքոյ գրեալ եռապա-
սիկ առաւելութեամբ ցանկն կը ներ-
կայացնեմք, յորոյ միայն մին պիտի
ընտրուի :

Մեծ. Գրիգոր էֆ. Կիւմլիզկերտան
» Յովսէփ » Գալաթեան
» Ռուբէն » Եպարդոսեան

Ընտրողը ազատ են սոյն ցանկէն
գուրս անձանց քուէ տալ, պայմա-
նաւոր ընտրելին Մահմադաւորութեան
արամադրութեան համաձայն լինի :

Քուէարկութիւնը պիտի կատար-
ուի յառաջիկայ կիրակէ ի ժամ 4,
ուսկից ետքը եկած քուէներն անըն-
դունելի պիտի ըլլան :

Ի դիմաց Ընտրող ժողովոյ
1879 մայիս 14 Նախագահ
Պալատ Դեպքէ Գ. Փաշա

Ա. Զ. Գ.

Մօտ օրերս աղագային պաշտօնով
դուրս երթալու հարկադրուած ըլ-
լանուա, կը ծանուցանեմք թէ տալ-
բանիս վարձու պիտի տամք չափա-
ւոր պայմաններով : Ուստի պէտք ու-
նեցողները կը հրաւիրուին զայ մեզ
հետ տեսնուի :

Եհնի-Գարու Հայտնի վ. Դիւան

Ա. Զ. Գ.

Մայրաքաղաքիս կամ գուրաւաց
աղագային վարժարաններուն մէջ Հա-
յերէն, Գաղղիերէն, Թուրքերէն,
Թուրանականութիւն, Պատմութիւն և
ուրիշ ուսմանքներ դասախօսելու
պատրաստ Հայ երիտասարդ մը կայ՝
լաւ վիճականներով : Պէտք ունե-
ցողը Ղալաթիոյ Աղագային վարժարա-
նին տեսուչ Արթ. Տաճատ վարդապե-
տին հետ պէտք է խօսի :

